

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈԼՈՐՏ
2015 ԹՎԱԿԱՆ

Շիրակի մարզում երիտասարդության թիվը կազմում է բնակչության մոտ 25 տոկոսը, որը բավականին մեծ մարդկային ներուժ է՝ քաղաքացիական հասարակության կայացման և զարգացման գործընթացն ապահովող համապատասխան ծրագրերի իրականացման համար: Երիտասարդության շրջանում կազմակերպված միջոցառումները միտված են եղել ապահովելու պետական երիտասարդական քաղաքականության հայեցակարգի դրույթներն ու ռազմավարության կատարումը:

Կազմակերպվել են երիտասարդության հարցերի ոլորտում առկա զարգացումներին ու նախաձեռնություններին նվիրված քննարկումներ՝ դրանց մասնակիցը դարձնելով երիտասարդության հարցերով զբաղվող պետական, տեղական ինքնակառավարման մարմինների ու հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչներին:

Մարզի երիտասարդության տարաբնույթ խնդիրներին լուծումներ տալու առումով կարևորվել է ոլորտի նկատմամբ պետական հոգաձության ավելացումը, երիտասարդական միջոցառումների ֆինանսավորումը, երիտասարդության համար աշխատատեղերի ստեղծումը, նվազագույն սոցիալական երաշխիքների ապահովումը, ոլորտի հասարակական, մասնավոր և պետական հատվածի ջանքերի համախմբումը:

Մարզում կազմակերպվել են Երիտասարդության ոլորտին առնչվող մարզամշակութային միջոցառումներ՝ «Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդության ռազմամարզական խաղեր», «Բազե -2015», և «Երիտասարդ նկարիչների միաջազգային Պլեներ»: Վերջինիս ՀՀ մարզերի պատվիրակներից բացի իրենց մասնակցությունն են բերել ԼՂՀ-ի, Ռուսաստանի Դաշնության և Վրաստանի ներկայացուցիչները:

Մարզպետարանի կողմից համապատասխան անհրաժեշտ աջակցություն /այդ թվում նաև նյութական ու ֆինանսական/ է ցուցաբերվել երիտասարդական հասարակական կազմակերպություններին՝ միջոցառումների կազմակերպման ու անցկացման ուղղությամբ:

Մարզի երիտասարդ քաղաքացիների անմիջական մասնակցությամբ մշակվել և իրականացվել են մի շարք ծրագրեր: Այդ թվում.

-- Երիտասարդական ոլորտի փորձագիտական ոչ ֆորմալ խումբ «Գյումրու երիտասարդական խորհուրդ»-ի և «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ-ի կողմից իրականացվել է «Գյումրու երիտասարդական քաղաքականության զարգացում» հետազոտական ծրագիրը, որի արդյունքում տպագրվել է «Գյումրու երիտասարդության իրավիճակի վերլուծություն» զեկույցը: Այն ամփոփում է ծրագրի շրջանակներում անցկացված սոցիոլոգիական հետազոտության արդյունքները: Ներկայացված են հարցումների, ֆոկուս խմբերի և հարցազրույցների տվյալները և դրանց առաջնային վերլուծությունները, տեղական երիտասարդական քաղաքականության իրականացման մեխանիզմների վերաբերյալ մշակված առաջարկությունները, վեր են հանված Գյումրու երիտասարդական քաղաքականության գերակայությունները, երիտասարդության հիմնախնդիրներն ու հնարավորությունները:

-- <<ԿԱԶԱ>> շվեյցարական մարդասիրական հիմնադրամի Գյումրու սոցիալ-ուսուցողական և զարգացման կենտրոնի կողմից իրականացված երիտասարդական ծրագրեր, որոնք նպաստում են երիտասարդների համայնքային ներգրավվածությանը և նախաձեռնողականության խթանմանը:

- Հայ Առաքելական Եկեղեցու Շիրակի թեմի Սուրբ Յոթ Վերք եկեղեցու <<Բարեգործական ջոկատ>>-ի կողմից Սուրբ Ծնունդին և Զատիկին ընդառաջ իրականացված հագուստի և զատկական սննդի տրամադրում Գյումրիում բնակվող անապահով ընտանիքներին, ինչպես նաև սիրիահայ ընտանիքներին: Ջոկատն իրականացրել է նաև <<Մեկ քայլ դեպի ապագա>> ծրագիրը, որի շրջանակներում մի շարք տարբեր առարկաների կրկնուսույցներ համաձայնել են անվճար պարապել մանկատան թվով 14 երեխաների հետ՝ ԲՈՒՀ ընդունվելու նպատակով: Ջոկատի և եկեղեցու երիտասարդական միության կողմից իրականացվում է <<1 բացիկ -1 բնակարան>> ծրագիրը, որի նպատակն է միջոցների հայթայթմամբ բնակարան գնել մեկ անօթևան ընտանիքի համար:

--<<Կայտբորդինգի զարգացման կենտրոն>> ՀԿ-ն իրականացրել է շենքային և բացօթյա ուսուցողական վարժանքներ գյումրեցի երիտասարդների և պատանիների համար:

--<<Ծիրանափող>> մշակութային, երիտասարդական ՀԿ հանդես է եկել տարբեր համերգների կազմակերպմամբ և ժողովրդական երգերի հավաքագրումով:

--<<ԼոգոՍ>> երիտասարդական ՀԿ-ն հանդես է եկել <<Երկիրը մեր տունն է >> <<Եծանվով դեպի մշակույթ>> և <<Ծխախոտի կանխարգելումը հասարակական տրանսպորտում>> ծրագրերով :

--<<Կոմպասս>> գիտահետազոտական, կրթական և խորհրդատվական կենտրոն ՀԿ-ի կողմից հիմնվել է ձեռներեցության զարգացման երիտասարդական ակումբ, որի նպատակը հարուստ գիտելիքներով և անհրաժեշտ փորձով ուսանողների խումբ ունենալն է: Մարզի գյուղական համայնքների թվով 30 երիտասարդների ՀԿ-ի կողմից հնարավորություն է ընձեռվել դասընթացների միջոցով ստանալու համապատասխան գիտելիքներ՝ ձեռնարկատիրական հմտությունների վերաբերյալ:

Մարզի երիտասարդական կազմակերպությունների կողմից իրականացվում է նաև <<Հույս, հավատ, սեր>> ծրագիրը, որի նպատակն է մաքրել ու բարեկարգել Շիրակի մարզի խոնարհված եկեղեցիները:

Շիրակի մարզկենտրոն Գյումրին ճանաչվել է հանրապետության 2016 թվականի երիտասարդական մայրաքաղաք:

**«ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԿՐԹՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ**